ջին, ջալ, պարկ, պահարան, սնդուկ. երկաթ՝ կացին, ուրագ, սղոց, դանակ, մկրատ, չաքուչ. գեհի՝ հրացան, ատրճանակ, խանչալ և այլ պաղ զէնքեր։

Գոմը: Համարեա բոլոր գիւղերում տան բակի մէջտեղ է շինուած լինում գետնափոր գոմը. դա արտաքուստ դուռ չունի, այլ երկու արշին բարձրութեամբ մի բացուածք է, որի երկու կողմերից և վերևից ծածկուած է ցեխից շաղախուած քարէ պատերով. ներս ես մտնում սանդուխքների վրայով զառիվայր դէպի գոմը. դա մի երկար շինութիւն է, ուր պատի երկարութեամբ շինուած մսուրի մի կողմում կովերը, երինջները, հորթերը կապուած են շարքով, մի ուրիշ կողմում այծերը, ոչխարները և գառները կանգնած են, իսկ մի այլ կողմում գոմէշները։ Գոմն ընդհանրապէս մութ է և յատակը ծածկուած է փշրած և չորացրած աթարով, որի վրայ պառկում են անասունները։ Գոմում գտնուում է նաև մի կամ երկու ջրհոր։

Դարմանաց (մարագ): Սա այն վայրն է, ուր պահում են անասունների կերը. գտնուում է կամ գոմին կից և կամ գիւղի մէջ, մի առանձին տեղում։

ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԽՄԻՉՔ

Փէրիացիների գործածական գլխաւոր կերակուրները կազմում են կաթնեղէնն ու ձուեղէնը, ապա բուսեղէնը, մսեղէնը և քիչ մասով քաղցրաւենիքը և թթուները։

Այստեղ օրն երեք անգամ հաց են ուտում. առաւօտեան, կէսօրին և երեկոյեան, իսկ ժամը չորսին թէյ խմելու սովորութիւնն այստեղ էլ տարածուել է։ Մի հանգամանք սակայն, որ աչքի է ընկնում, դա այն է, որ տեղական նահապետական հին սովորութեան համաձայն՝ տղամարդիկ առանձին հաց են ուտում և կանայք առանձին։

ԿԱԹՆԵՂԷՆ

Կաթ։ *Ոչխարի, այծի, կովի, գոմէշի* (քիչ է)։

Սեր։ *Կաթը եռացնում են պղնձէ ամանի* (ղազան) *մէջ և մո-*